

ռուպիա սահմանել՝ մինչև ցՍեփտե¹։ Իսկ ի հարա-
ւոյ կողմանէ կիբիա սահմանել՝ մինչև ցնոյն
Սեփտե²։

21 Երրորդ³ ծով՝ Վրկանին է, որ կոչի Կաս-
բից։ Եւ ձգի երկայնութիւն նորա ի բերանոյն Ե-
րասխայնի եւ ի Կո[ւ]ր⁴ գետոյն մինչև ցՈւտուպու-
լիտի⁵ գետոյն, որ թարգմանի⁶ Բազմապատիկ՝
մասուն[ս] քսան եւ երեք⁷։ 22 Եւ սահմանէ յա-
րեւմտից՝ աշխարհաւք [Հայաստան]⁸, եւ յարեւմտից
հիւսիսոյն՝ Աղուանիւք առ Կեսիոս գետով, ապա
մուտք Գեռաս եւ Սոնդաս եւ Ալանդաս եւ Ոգոն
գետովք՝ հոմանո[ւ]ն ազգաց, որ ի Կակասայնի
ելանեն եւ մտանեն ի ծով, եւ են ազգ[ք]ն⁹ այն
հոմանուն չորիւք գետովքն ի Սկիւթ [թ]ւահա-
մար¹⁰, որ են Ապխտարք։ 23 Իսկ ի հիւսիսոյն
կողմանէ¹¹ սահմանի Սկիւթաց[ւ]ոց¹² աշխար-
հաւն, առ մուտս Խա¹³ գետոյ, զոր կարծեն¹⁴ Ե-

մաթ է, եւ Ռիմոսի եւ Դեքսի եւ Իաքսառտեայն¹⁵
գետոց։ 24 Իսկ յարեւելից կողմանէ սահմանի
ազգաւն, որ կոչի Անարիական Նոմաս¹⁶, առ
մտիւքն Յոստոս գետոյ, եւ գաւառն, որ¹⁷ կոչի
Սագառուկէ, եւ մտիւք գետոյն, որ կոչի Պոլիտի-
միտէս, զոր նախն ասացաք, որ ելանէ յԱւսիս
լեռնէ, առ որովք Սոգդիանի¹⁸ գաւառ, եւ մուտք
Ոքսոս գետոյ, առ որովք Ռուբիու ազգ. եւ քա-
ղաք[ք]՝ Երեք¹⁹, մին կոչի Ասպաբովտա²⁰, եւ միւ-
սն՝ Ոքսիա²¹, եւ միւսն Դիւաբա։ 25 Եւ յարեւելից
հարաւոյն²² սահմանի Դէքսիա²³ ազգաւ, առ ո-
րով գետն Մառգիւ ի Մարգանի աշխարհի, որ ինձ
թուի՝ Մր եւ Մրվոտ լինել, եւ Աստաւանի ազգ
եւ Մաքսիուս գետ եւ հոմանուն գաւառ, մինչև
ցՔոնիդաս գետ, որք են Վրկանի աշխարհի²⁴, առ
որով ձգի երկրորդ Ագոն լեռն։ 26 Իսկ ըստ
հարաւոյն սահմանի Մեդաց աշխարհաւն, որ են
Մարք, առեալ ի նոյն Քոնիդաս²⁵ գետոյ, եւ յա-
րեւմուտս կոչս՝ ազգաւն²⁶ [8ա] Անարիական²⁷
Մարք, եւ մուտք²⁸ գետոյն, որ կոչի Սոռառո-

1 V ցՓեւտէ փիս ցՍեփտէ (վեր. Սուրբեանի՝ ըստ
նախորդների, տե՛ս նախ. Բ.10, 18)

2 V Փեւտէ փիս Սեփտէ (վեր. Սուրբեանի. նոյնը)

3 V-ի Ե-ն գլխատառով է, իսկ տողից ձախ, լուս-
անցքով պատուով նշանների մէջ ձեւատրուած է
ճ. սրանք լոկ պարբերութեան նշաններ են

4 V Կոր փիս Կուր (վեր. Սուրբեանի՝ ըստ այլոց.
տե՛ս նախ. Բ.95-99, 101-107, 115 եւն)

5 S ցՊալիսիսիսիստոս [ըստ Պտղոմէոսի, համառոտ
խմբագրութեան եւ յաջորդի՝ նախ. Բ.24] փիս ցՈւ-
տուպուլիսիսի (V. արդեօ՞ք, վերականգնելի է հե-
ղինակի կամ գոնէ աղբիւրի՝ ց[Ու]տու-ու-Պուլի-
սիսի՝ իրան. Ռուդ – «գետ» գետանունասկզբով)

6 Տթարգմանի փիս թարգմանի (V. հմմտ. Դ.28)

7 V մասուն ի՞նչ փիս մասուն քսան եւ երեք (վեր.
Սուրբեանի)

8 VS չիք Հայաստ (վեր.՝ ըստ համառոտի DPv-ի
(AE-ում՝ Հայովք), տե՛ս աւք ... աւք. V-ի աշխար-
հաւք-ը բառասկզբի ա-ով է, ալիքաձեւ գաղա-
փարագրով՝ պատուով նշանի տակ, եւ օք-ով)

9 V ազգն փիս ազգքն (վեր. Սուրբեանի՝ ըստ միւս-
ների, օր.՝ նախ. Բ.13, Գ.56 եւն)

10 V Սկիւթ ւախմար, S Սկիւթիայ համար փիս
Սկիւթ թախմար (վեր., հմմտ. Սկիւթ – թախ...)

11 V-ի գրիչը կողմանէ-ն լրացրել է տողից վեր՝ կից
բառերի միջեւ դնելով կայծակնաձեւ նշաններ

12 V Սիւթացոց փիս Սկիւթացոց (վեր. Սուրբեանի՝
ըստ այլոց. տե՛ս նախ. Ա.9, Բ.22, Ե.80, 268 եւն)

13 V տառա, S Տառայ փիս տառա (վեր. Երեմեանի.
տե՛ս մուտս – տառա. նախ. Ե.78-ն ունի՝ Խա)

14 S կարծեմ փիս կարծեմ (V)

15 V Իաքսառտեա, S Իաքսարտեայ փիս Իաքսառ-
տեայն (վեր., տե՛ս բոլորագիր n → n)

16 VS Նոմբաս [ա-ն ա-ից վեր, կայծակնաձեւ նշա-
նով] փիս Նոմբաս (վեր., տե՛ս ոմա → ոմբա.
Սուրբեանը շեղել է 2 բառերը (նաեւ յաջորդող
Սագառուկէ, Աւսիս, Ռուբիու-ն)՝ Այլ ՕՕ. Արի-
ական Ամբոստակէք՝ ծնթ-մթ. Երեմեանը վերա-
կանգնում է՝ «Արիականք եւ [ազգն] Նամաս-
[տէ]» ըստ Պտղոմէոսի՝ Ἀριάκαι, Ναμάστα)

17 S չիք որ (V)

18 VS Սիանի փիս Սոգդիանի (վեր. Երեմեանի՝
ըստ Պտղոմէոսի՝ Σογδιάννα. հմմտ. նախ. Ե.283)

19 V թի ճ փիս քաղաքք երեք (վեր. Սուրբեանի)

20 VS Ասպաբովտա փիս Ասպաբովտա (վեր. ըստ
Երեմեանի. Պտղոմէոսի մօտ՝ Ἀσπαβότα πόλις)

21 V Ռքսիա փիս Ոքսիա (վեր. Սուրբեանի, հմմտ.
բոլորագիր n → n. ըստ Երեմեանի՝ Արքսիա[նա])

22 V հարաւու փիս հարաւոյ (վեր. Սուրբեանի)

23 Գուցէ՛ Ոքսիա՞ փիսն. Գէդքսիա, թարգմանում
յուն. ծե՛ Օջիւ-ից. ըստ Երեմեանի՝ «Ὠξείανοι?»

24 S աշխարհ փիս աշխարհի (V)

25 V Գոնիաս, S Քոնդաս փիս Քոնի[ն]դաս (վեր.՝ ըստ
նախորդի՝ նախ. Բ.25. Պտղոմէոսի մօտ՝ Χαρίνδα)

26 S-ի «որ կոչի»-ին V-ի լուսանցքով ուշ ձեռքով է

27 VS Անարական փիս Անարիական (վեր. Երե-
մեանի. հմմտ. Բ.24. Պտղոմէոսի մօտ՝ Ἀναρίακαι)

28 VS մուտք փիս մուտք (վեր. ըստ նախորդների)